



# ՍՈՒՐԲ ԶԱԿՈՒԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Տօն Երեման Ս. Խաչին  
28 ԱՊՐԻԼ 2024

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»  
ԳԻՐՔԵՆ  
(17.1-15)

Ա մփիպոլիս եւ Ապողոնիա  
քաղաքները շրջելէ ետք  
Պողոս եւ Շիղա Թեսաղոնիկէ եկան ուր  
հրեաներու ժողովարան մը կար: Պողոս  
ըստ իր սովորութեան ժողովարան  
գնաց, եւ երեք Շաբաթ օրեր անոնց  
քարոզեց: Կը բանար ու կը բացատրէր  
Գիրքերը, անոնցմով կ'ապացուցանէր  
թէ ի՞նչպէս Քրիստոս պիտի չարչարուէր  
ու մեռելներէն յարութիւն առնէր, եւ  
կ'ըսէր. «Այն Յիսուսը զոր ես ձեզի կը  
քարոզեմ, ա՞ն է Քրիստոսը, խոստացուած  
Փրկիչը»: Թեսաղոնիկեցիներէն ոմանք  
հաւատացին եւ Պողոսի ու Շիղայի  
յարեցան: Նոյնպէս անոնց յարեցան  
շատ մը աստուածապաշտ յոյներ եւ  
նկատառելի թիւով երեւելի կիներ:

Հրեայ առաջնորդներ նախանձեցան,  
եւ փողոցներէն քանի մը դատարկապորտ  
անօրէններ հաւաքելով ամբոխ կազմեցին,  
ամբողջ քաղաքը խոռվեցին եւ Յասոնի տան  
վրայ խուժեցին՝ Պողոսն ու Շիղան բռնելու  
եւ ժողովուրդին առջեւ հանելու համար: Բայց երբ զանոնք չգտան, Յասոնն ու քանի  
մը ուրիշ հաւատացեալներ քաշեցին տարին  
քաղաքի իշխաններուն առջեւ, պոռալով.  
«Այն մարդիկը որոնք ամբողջ աշխարհը  
իրար անցուցին, հիմա մեր քաղաքը եկեր են,  
եւ Յասոն իր տունը առեր է զիրենք: Ասոնք

բոլորը կայսեր օրէնքներուն հակառակ  
կը գործեն, որովհետեւ ուրիշ թագաւոր  
մը կը ճանչնան, Յիսուս անունով»: Այս  
խօսքերով անոնք խոռվեցուցին ամբոխը եւ  
քաղաքի իշխանները: Սակայն իշխանները  
Յասոնէն եւ միւս քրիստոնեաներէն երաշ-  
խաւորութիւն առնելով ազատ արձակեցին  
զանոնք:

Հազիւ գիշերը վրայ հասած, քրիս-  
տոնեաներ Բերիա ղրկեցին Պողոսն ու  
Շիղան, որոնք երբ հոն հասան՝ հրեա-  
ներու ժողովարանը գացին: Բերիայի  
հրեաները աւելի ազատամիտ էին  
քան Թեսաղոնիկեցիները, ուստի մեծ  
յօժարութեամբ ընդունեցին Աստուծոյ  
խօսքը եւ ամէն օր Գիրքերը կը քննէին,  
տեսնելու համար թէ ճշմարի՞տ են  
Պողոսի քարոզածները: Անոնցմէ շատեր  
հաւատացին: Նմանապէս հաւատացին  
բազմաթիւ ազնուական յոյն կիներ եւ  
այրեր: Բայց երբ Թեսաղոնիկէի հրեաները  
իմացան թէ Պողոսի մէջ եւս  
Աստուծոյ խօսքը քարոզեց, հոն ալ եկան  
ժողովուրդը գրգռելու եւ խոռվութիւն  
ստեղծելու համար: Ուստի հաւատացեալները  
անմիջապէս Պողոսը մինչեւ ծովեզերք  
ղրկեցին, իսկ Շիղա եւ Տիմոթէոս հոն  
մնացին: Պողոսի ընկերացողները զինք  
մինչեւ Աթէնք հասցուցին եւ ապա Բերիա  
դարձան, Շիղայի եւ Տիմոթէոսի համար  
Պողոսին պատուէր առնելով որ չուտով  
գան իր մօտ:

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**  
**ՅՈՎՃԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ**  
**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԻՆ**  
**(1.1-10)**

**Մ**ենք լսեցինք, մեր աչքերով տեսանք  
Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի  
ստեղծիչն էր: Անիկա նոյնինքն կեանքն  
էր որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը  
վկայենք, ձեզի պատմելով անոր մասին,  
այսինքն յաւիտենական կեանքին մասին,

**Աստուած**  
լոյս Է. բնաւ  
խաւար չկայ  
անոր մէջ:

որ Հօրը հետ էր եւ այժմ  
մեզի յայտնուեցաւ: Ինչ  
որ տեսանք ու լսեցինք կը  
պատմենք ձեզի, որպէսզի  
դուք ալ մասնակից  
դառնաք այն հաղորդակցութեան որ մենք  
ունինք Հօրը եւ անոր Որդւոյն Յիսուս  
Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը  
կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք  
ձեզի այս նամակը:

Պատգամը որ լսեցինք եւ ձեզի կը  
փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է.  
բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ  
ըսենք “հաղորդակից ենք իրեն” եւ միւս  
կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ,  
կը ստենք ահա եւ ճշմարտութեան դէմ  
կը գործենք: Իսկ եթէ Աստուածոյ լոյսին  
մէջ քալենք, ինչպէս ինք լոյսի մէջ է,  
այն ատեն ճշմարտապէս հաղորդակից  
կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի  
արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

Եթէ ըսենք “մեղք չունինք”, մենք մեզ  
կը խարենք եւ կը մերժենք ճշմարտութիւնը  
ընդունիլ: Իսկ եթէ խոստովանինք մեր  
մեղքերը, վստահ եղէք թէ Աստուած որ  
արդար է՝ պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ  
պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն:  
Եթէ “մեղք չգործեցինք” ըսենք, ստախօս  
կը հանենք զԱստուած, քանի իր խօսքը  
չենք ընդունիր:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ**  
**ԸՍ ՅՈՎՃԱՆՆԵՍԻ**  
**(7.14-24)**

**S**աղաւարահարաց տօնակատա-  
րութեան մօտաւորապէս կէսին,  
Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել:

Հրեաներ կը զարմանային  
եւ կ'ըսէին. «Ինչպէ՞ս  
այս մարդը Սուրբ Գիրքերը գիտէ, երբ բնաւ  
չէ ուսած զանոնք»:

«Ինչ որ ձեզի  
կ'ուսուցանեմ՝  
իմ վարդապե-  
տութիւնս չէ,  
այլ անորը՝ որ  
զիս դրկեց:»

Յիսուս պատասխանեց  
անոնց. «Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ  
վարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ  
զիս դրկեց: Ով որ կ'ուզէ Աստուածոյ կամքը  
կատարել, պիտի հասկնայ թէ Աստուածմէ՞  
է այս վարդապետութիւնը, թէ ես ի՞մ  
հեղինակութեամբ կը խօսիմ: Ան որ իր  
հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին  
համար փառք կը փնտոէ, իսկ ան որ զինք  
դրկողին փառքը կը փնտոէ, ճշմարիտ է եւ  
խարէութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի  
Օրէնքը չտուա՞ւ. սակայն ձեզմէ ոչ ոք կը  
հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզէք զիս  
սպաննել»: Ժիսուս պատասխանեց. «Հրաշք  
մը գործեցի եւ բոլորդ վրդովեր էք: Մովսէս  
հրահանգեց թլփատել ձեր զաւակները  
- թէեւ Մովսէս չէր սկսողը, այլ ձեր  
նախահայրերը - եւ դուք ձեր զաւակները կը  
թլփատէք Շաբաթօրով:

Եթէ մէկը կը թլփատէք  
Շաբաթօրով, որպէսզի  
չըեկանուի Մովսէսի  
Օրէնքը, ինչո՞ւ  
զայրացած էք ինծի դէմ,  
որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի  
Շաբաթօրով: Երեւոյթներէն մի՛ դատէք, այլ  
արդար դատաստան կատարեցէք»:

«Երեւոյթներէն  
մի՛ դատէք,  
այլ արդար  
դատաստան  
կատարեցէք»: